25

Ճանապարհորդի ամենայն ժամք անա-
զան են։

25

Մեռելութիւն ախտից՝ կամաւոր աք-
սոր ի կրից։

25

Միտք ի տան խորհրդոց իւրոց ընթա-
նան որպէս նժոյգ յանբաւ կրկիսի։

26

Ի շարժել ճրագի շրջին ստուերք գոյից,
և ի շարժել բաղդի՝ փոփոխին յոյսք
մարդոյ։

26

Զիք ազնիւ քան զծաղիկ՝ այլ փշոյ
դրացի է, և առաքինութեանց մերձ կան
կիրք։

26

Ժողով առաքինեաց՝ բազմութիւն աշ-
խարհաց։

26

Քանիցս եկեալ մարդոյն յաշխարհ ըզ-
կեանս ծնողին անկայուն կենաց իւրեանց
զոհեցին։

26

Ցոյնչէ գայ մարդ ի տապան կենդա-
նի, և յընչէն դառնայ ի տապան ան-
կենդան։

28

Համբաւ հասանէ ի սիրտ մերթ որպէս
զաղաւնի քաղցրաւաչ, մերթ որպէս անգղ
գիշատիչ։

28

Ի նմին շրթանց կաթեն մեղր և թոյն։

29

Ուրախութիւն՝ հառագայթ ջինջ սրտի։

29

Որ զԱստուած սիրէ, սիրէ զամենայն,
որ զանձն սիրէ, սիրէ և ոչինչ։

29

Այլ է սիրտ խաչին սիրող, և այլ է
սիրտ համափոխեալ ի խաչ։

30

Համբերութիւն կանխաւ բառնայ գծան-
ութիւն գործոյն կիսով չափ։

30

Աչք՝ զոյգ կանթեղաց ջրով բուծելոց։

30

Եթէ լեզու զձև սայրասուր փքնի բերէ՝
ականջք վահան լիցին և ոչ խոցք։

31

Են միտք որ յոգս քաղաք կառուցա-
նեն, և ազգելոյ հանճի միոյ ժոյժ ոչ
ունին։

31

Որ չունի ուստեր երկիւղ՝ յինքեան կրէ
զպաշտպանութիւն։

31

Ճշմարտութիւն հագիւ զմասն մի աշ-
խարհիս ճանաչէ, ցնորք մտաց աշխարհս
նորանորս ստեղծեն։

Հ. Ղ. Ալշան

Շարայսրելի



Ս. ՂԱԶԱՐՈՒ ԶԵՌԱԳՐԱՏԱՆ

ՃԳ. ԱԻԵՏԱՐԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Այս չորրորդն է — 1888էն ի վեր ե-
գիպտոսէն դրկուած — մեր ազգային գեղ-
արուեստական այն թանկագին գանձե-
րէն, զոր յ19 Մայիս ներկայ տարւոյս
ընդունեցաւ Մայրավանացս Զեռագրա-
տունն իբր հաճոյական ընծայ Մուրա-
տեան վարժարանի նախկին սան, և այժմ
Նախարար կրթութեան Եգիպտոսի, վեհ-
մափայլ Եակուբ Արդին փաշայեն։ Աւետա-
բանս է թղթեայ՝ բոլորգիր նոր, և ունի
30 մեծադիր նկարներ, 10 սիւնազարդ
խորաններ և 4 ալ կիսախորան. իսկ լու-
սանցազարդերն, զարդագիրք և մանրանը-
կարք շատ յաճախ, բոլորն ևս բազմա-
գունեան են և ոսկեզարդ։ Թէպէտև նը-
կարքն չունին յամին 1903 յղած միւս
Աւետարանի նկարուց նրբութիւնն և կա-
տարելութիւնը, սակայն և այնպէս ժէ-
ժէ. դարու[1] հայկական նկարչութեան

1. Զեռագիրս մի միայն յիշատակարան ունի Ցով-
հաննու աւետարանին վերջ — գրչութենէն տարբեր բո-
լոր գրով — ուր գրութեան մասին կայ հետեւեալն. «Եւ
սոյն այս տառս գրեալ ծաղկեցաւ և աւարտեցաւ ի ֆա-

digitised by A.R.A.R.@

համար ունի իւր առանձին յարգն և կա-
ւորութիւնը։

Աւետարանս արձանագրած ժամանակ՝ ի յուշ և յիշատակ ապագայից՝ միւս անգամ ևս հրապարակաւ և երախտագիտութեամբ կը մատուցանենք՝ նորին գերազանցութեան, գեղարուեստից Մեկենասին և Միաբանութեանս անմոռաց բարերարին մեր ամենախորին շնորհակալութիւնը՝ լի գոհութեամբ և գովութեամբ։

Այս առթիւ կը ծանուցանենք միանգամայն որ Մայրավանացս 2,000ի մօտ Ձեռագրաց Ցուցակի յօրինումն ևս՝ տարի մը կայ՝ որ սկսեր ենք և ըստ բաւականին յառաջ տարած, մինչև հիմա հրատարակուած Ցանկերու սահմանքն ի՛նչ ինչ կէտերով ընդարձակելով. — այսինքն՝ մանրամասնօրէն նկարագրելով անոնցմէ հինեւրուն հնագրութեան ուղղագրութեան գաղտնիքը, և պատկերազարդներուն ալ մանրանկարուց գունոց, բաղադրութեան, ոճի և այլն՝ առանձնայատկութիւնը. — ուզելով այսու դուրս ցատկեցնել անոնց նկարչութեան գեղարուեստական արժանիքն և իրարու հետ ունեցած առընչութիւնքը. այնպէս որ այդ Ձեռագիրներուն ականատես չեղող անձինք ևս կարենան որոշ գաղափար ունենալ անոնց վրայ։ Աստուածաշունչներուն և Աւետարանաց իւրքանչիւրին մէջ՝ բաց ի նորագիւտ բանեբէն՝ կը նշանակուին նաև՝ մեկնողական տեսակէտով՝ խնդրոյ նիւթ եղող կէտերն ևս՝ գիտնոց ապագայ ուսումնասիրութիւնքը դիւրացնելու նպատակաւ. օր. ա. զագաւ, թէ ո՞ր օրինակաց մէջ կը գտնուին կամ ոչ Մարկոսի Ա. 1. սրդեայ Աստուծոյ յաւելուածն, Մարկ. ԺԶ. 9–20, — Ղուկ իբ. 43–44, և Ղուկ. իդ. 13 (Եմմաուսի մասին), — Յովհ. Ե. 4, և Է. 53 — Ը. 11 և Յովհ. Ա. Թղթի. Ե. 8 հատուածներն, ևն։ իսկ Ցեղկուրիւնք բաժնի ներքև կ'արձանագրուին մէն մի Ձեռագրի նուիրողին, յուզարկողին և նոյն իսկ վաճառողի անունն և ազգանունը ևս՝ հանդերձ յարակից պարագաներով։

Այս ծանուցումս ըրած ժամանակ՝ կը յուսանք թէ Մխիթար մեծ Սեբաստացւոյ տունը սիրող և յարգող ուրիշ բարեկամներ ևս կը հաճին — իրենց նախորդներու վեհանձն օրինակէն առիթ առնելով — յղել նման Ձեռագիրներ՝ ո՛չ միայն ապահովելով զանոնք Ս. Ղազարու անփոխարէն անքոյթ կղզեկին մէջ, այլ մանաւանդ թէ թողլով, իբրև զաւակ և անմոռաց յիշատակ, ազգային գիտութեան և գեղարուեստից այդ տաճարին մէջ։

Իսկ որոնք որ ունին հին և ընտիր Ձեռագիրներ միայն վաճառելու համար՝ թող հաճին նախ հաղորդել անոնց մասին հարկաւոր տեղեկութիւններ, նշանակելով Ձեռագրի նիւթը, գրին տեսակը, գրչութեան թուականը, պարունակութիւնն և լաւ կամ վատ հանգամանքը. և իրենց կողմանէ ալ գին մը կտրեն, և կամ յղեն մեզ որ ըստ արժանւոյն գնահատենք։ Առ այս սակայն կանխած ըսած ըլլանք, որ ոմանք անձեհաս ըլլալով Ձեռագրաց քննութեան և արժանիքը ճանչնալու, երբեմն չափազանցուած գին կը պահանջեն գնողէն. և որ զարմանալին է՝ երբեմն ալ նոյն իսկ նորագիր, և պակասաւոր և ո՛րևիցէ գեղարուեստէ կամ պատմական և այլ նորութիւններէ զուրկ եղող օրինակներու համար։ Ուստի այսպիսիք պէտք են գիտնալ որ եկեղեցական գիրքերն՝ որոնց թիւը շատ մեծ է ազգային Մատենադարաններում, մեծ արժէք չեն կրնար ունենալ՝ եթէ չունին կա՛մ պատկառելի հնութիւն և կա՛մ քաջարհեստ և նուրբ մանրանկարներ։ Այսպէս դատելու է նաև պատմական, ճառական և այլ տեսակ Ձեռագիրները՝ տպագրուածներէն ունեցած զգալի տարբերութիւններէն և կամ ոչ. և այն ժամանակ կը դիւրանայ երկու կողմէն գիրքը հաճելն և վաճառման գործը։

Հ. Բ. Սարգիսեան

զաքա յերդիկայ՝ որ և ասի Թոխար, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի նախավկայի ի քառեհ, հայոց երկիրքսահի երր յոթելեմի և ՀԱ թիւ յարաբարդի, ի յունէն ամսոյ ժեռամբ յոգնամեղ և բազմասիալ Պաղտա անարենատ գրի. ի ինդրոյ վերոյգրեալ մանուսէսի Էջարդեի և մանուսէսի Ցարոբքեան»։ Թէ՝ վերը և թէ՝ հոս կրկնուած անուանցն յետոյ գրուած են՝ սեւագոյն մելանով և մեծկակ գրով։

digitised by A.R.A.R.@